Իրավական աջակցություն
2005թ. ապրիլ – 2006թ. Մարտ

2005թ.-ի ապրիլից մինչեւ 2006թ.-ի մարտը Ինֆորմացիայի ազատության կենտրոնին է դիմել 913 անձ՝ 784 քաղաքացի 85 հասարակական կազմակերպություն, 22 լրագրող, 19 իրավաբանական անձ, 3 պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմին (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. *ԻԱԿ-ին դիմողների ընդհանուր պատկերը*

քաղաքացի	784
լրագրող	22
իրավաբանական անձ	19
հասարակական կազմակերպություն	85
տեղական ինքնակառավարման մարմին	3
ընդամենը	**913**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի իրավաբանների կողմից տրամադրվել է 913 խորհրդատվություն, որոնցից 390-ի դեպքում իրավաբանների օգնությամբ կամ նրանց անունից կազմվել եւ ուղարկվել են հարցումներ: Եւս 62 հարցում ուղարկել է ԻԱԿ-ը սեփական նախաձեռնությամբ, դրանով է պայմանավորված Ինֆորմացիայի ազատության կենտրոնին դիմած քաղաքացիների եւ ցույց տրված աջակցության թվերի տարբերությունը: 390 հարցումներից 361-ին պաշտոնյաների կողմից տրվել է սպառիչ պատասխան, 20 հարցում մերժվել է, 9 հարցում էլ մնացել է անպատասխան: Հարցումներն անպատասխան թողած կամ առանց օրենքով նախատեսված հիմքերի մերժած մարմիններից 8-ի գործողությունները վիճարկվել են դատական կարգով: Մնացած մարմինների ղեկավարները ներառվել են Սեւ ցուցակում:

Աղյուսակ 2. *ԻԱԿ-ի տրամադրած աջակցությունը*

բողոքարկում դատական կարգով	8
բողոքարկում վերադասության կարգով կամ դիմում համապատասխան մարմնին	390
Phone consultations	1
խորհրդատվություն այցելության ժամանակ կամ հեռախոսով	514
ՏԱ հարցում	62
ընդամենը	**975**

Մերժումների մեջ առանձնահատուկ ուշադրության են արժանի հետեւյալները:

2005թ. սեպտեմբերին ԻԱ կենտրոնի Արարատի մարզի իրավաբանը, ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, հարցում է արել Արարատի մարզպետին, որով խնդրել է տրամադրել մարզպետի կողմից 2005թ. I-II եռամսյակներում կայացրած որոշումների պատճենները, որին մարզպետ Ա. Սարգսյանը պատասխանել է. «Հայտնվում է, որ տեղեկատվություն ստանալու վերաբերյալ Ձեր հարցումը չի բխում Ձեր իսկ մատնանշած օրենքի պահանջներից: Այն պարունակում է հաշվետվության պահանջի կամ վերահսկողության տարր: Ձեր խնդրանքը կարող է բավարարվել, եթե այն ներկայացվի անհրաժեշտ իրավական ակտի կոնկրետ համարանշումով»: Մինչդեռ հենց նշված օրենքով են կարգավորվում հարցումներ անելու եւ դրանց պատասխանելու կարգը, ինչպես նաեւ հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը:

ԻԱԿ Արարատի մարզի իրավաբանը ստիպված եղավ պաշտոնատար անձի գործողությունները (անգործությունը) վիճարկելու եւ սպառիչ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին հայց ներկայացնել դատարան: Մինչ դատական գործի քննության ավարտը Արարատի մարզպետը տրամադրեց պահանջվող բոլոր տեղեկությունները: Արարատի առաջին ատյանի դատարանը վճռեց գործը կարճել եւ պարտադրել Արարատի մարզպետարանին հատուցել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի դատական ծախսերը:

Քիչ չեն նաեւ զավեշտալի դեպքերը: Այդպիսի օրինակ է Գյումրու քաղաքապետի պատասխանը ԻԱ կենտրոնի Գյումրու իրավաբանի կողմից արված հարցմանը, որով վերջինս խնդրել է տրամադրել 2005թ. I-II եռամսյակների ընթացքում ավագանու կողմից կայացված որոշումների եւ բյուջեի կատարման հաշվետվությունների պատճենները: Գյումրու քաղաքապետ Վ. Ղուկասյանը պատասխանել է, որ մենք կարող ենք ծանոթանալ պահանջվող տեղեկատվությանը Գյումրիի ինտերնետային կայքից, որը դեռ պատրաստման ընթացքի մեջ է: Այսինքն, կարող ենք ծանոթանալ, բայց չկա:

Օրենքի չիմացության եւ մանկական անհոգության տիպիկ օրինակ էր Կիրանց գյուղի գյուղապետ Հ. Նազարյանը: Նա, 29.11.2005թ. հարցում ստանալով Տավուշի մարզի մեր իրավաբանից, 11.01.2006թ. կնիքը գրպանում անձամբ է ներկայացել, տեղում կազմել պատասխանը, կնքել ու հեռացել՝ չմտածելով անգամ «ելից նամակին» հերթական համար տալու, այն գրանցելու հնարավորության կամ անհրաժեշտության մասին:

Մի զավեշտալի պատմության հերոս էլ դարձել է Արարատի մարզի Այգավանի գյուղապետ Դ. Ավետիսյանը: ԻԱԿ-ը դիմել էր գյուղապետին՝ խնդրելով տրամադրել 2005թ.-ի ընթացքում հողհատկացումների վերաբերյալ նրա կայացրած որոշումների պատճենները: Պատասխան չստանալով՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստիպված եղավ գյուղապետին ներառել Սեւ ցուցակում: Գործին միջամտեց նաեւ ՀՀ նախագահի խորհրդական Բագրատ Եսայանը: Վերջապես գյուղապետը պահանջվող բոլոր

տեղեկությունները տրամադրեց: Գյուղապետի պատասխան գրությունը թվագրված էր 2006թ. հունվարի 21, այսինքն ստացվում էր, որ գյուղապետը Ինֆորմացիայի ազատության կենտրոնին պատասխանել էր դեռ 4 ամիս առաջ՝ հունվարին: Սակայն փոստային ծրարի վրա դրված էր փոստի առաքման կնիքը՝ ապրիլի 21, 2006թ.:

2005թ.-ի ապրիլից մինչեւ 2006թ.-ի մարտ ամիսը 65 դեպքում գրանցվել է պաշտոնյաների կողմից տեղեկատվության ազատության իրավունքի խախտում, այն է՝ բանավոր կամ գրավոր հարցումների անօրինական մերժում կամ անպատասխան թողնված հարցումներ (լուռ մերժումներ):

Կենտրոնի դիտարկումները ցույց են տալիս, որ ծրագրի իրականացման առաջին շրջանում խախտումներ են արձանագրվել Առողջապահության, Արտաքին գործերի, Կրթության եւ գիտության, Ֆինանսների եւ էկոնոմիկայի, Քաղաքաշինության նախարարություններում, անշարժ գույքի պետական կադաստրում, Զրմուղի, Սոցիալական ապահովության ծառայություններում: Տեղեկատվություն ստանալու իրավունքը մարզերում ավելի հաճախ խախտել են գյուղապետարանները: Քաղաքապետարանները եւ գործադիր իշխանության մարզային մարմինները համեմատաբար ավելի լավ են սկսել աշխատել ծրագրի իրականացման երկրորդ փուլում: Այնուամենայնիվ, նրանց մեջ էլ կան տեղեկատվության ազատության իրավունքը խախտողներ: Խախտումներ թույլ տվողներից են Արմավիրի, Արարատի, Աբովյանի, Վանաձորի քաղաքապետարանները:

Խախտում արձանագրվել է նաեւ ՀՀ Սպառողական կոոպերատիվների միություն «Հայկոոպ» վարչությունում: Այնուամենայնիվ, 5 ամիս պայքարից հետո՝ 2006թ.-ի մարտի 27-ին, «Հայկոոպը» պատասխանեց հարցումին: Խախտումների քանակն անհամեմատ մեծ կլիներ, եթե հաշվեինք նաեւ «ՏԱ մասին» ՀՀ օրենքով սահմանված 5-օրյա եւ 30-օրյա ժամկետների խախտումները: Օրենքը սահմանում է, որ ժամկետները հաշվվում են հարցում ստանալու օրվանից, ուստի ուշացած պատասխանները փոստի վատ աշխատանքի հետեւանքը չեն: Առավել մեծ խոչընդոտ են օրենքի չիմացությունը եւ դրա սխալ մեկնաբանությունը, ինչն առավել հաճախ է պատահում գյուղապետերի դեպքում, որոնցից ավելի շատ ժամանակ է պահանջվում հարցումը հասկանալու, քան տեղեկատվությունը տրամադրելու համար: Որոշ դեպքերում էլ «խանգարում է անբարենպաստ եղանակը»: Ամեն դեպքում 5-օրյա ժամկետի պահպանմամբ պատասխաններ եղել են:

Լավ արդյունք է ցույց տվել Երեւանի քաղաքապետարանը: 2005թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողները տեղեկատվության ստանալու 5 հարցում էին ուղարկել Երեւանի քաղաքապետարան: Բոլոր հարցումներն էլ պատասխանի են արժանացել, որոնցից 4-ը՝ 5-օրյա ժամկետում: Նույն ամիսների ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից 3 հարցում է ուղարկվել քաղաքապետարան: Այս հարցումներին եւս քաղաքապետարանը պատասխանել էր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում:

Հիշեցնենք, որ 2005թ. դեկտեմբերի 9-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից անցկացվեց տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխություն, որի ժամանակ Երեւանի քաղաքապետարանն արժանացավ փակ կողպեքի՝ որպես տեղեկատվության ոլորտում ամենափակ գերատեսչություն: Կարծես կողպեքը փոխում է Երեւանի քաղաքապետարանի աշխատառճը, եւ այսպես շարունակելու դեպքում «օրինախախտ» մարմինը կարող է հավակնել «Ոսկե բանալի» մրցանակին:

5-օրյա ժամկետի պահպանման ռեկորդակիր է Սյունիքի մարզը: Սյունիքի մարզում տեղեկատվություն տնօրինող մարմինները՝ այդ թվում Կապանի քաղաքապետարանը, Սյունիքի մարզպետարանը՝ իր տարբեր վարչություններով, ՀՀ Անշարժ գույքի պետական կադաստրի Կապանի տարածքային ստորաբաժանումը, Դովրուսի գյուղապետարանը, Լեռնաձորի գյուղապետարանը, Կապանի նոտարական գրասենյակը եւ այլն, ամենալավ արդյունքներն են ցույց տվել: 2005թ. նոյեմբեր-2006թ. փետրվար ամիսներին Սյունիքի մարզում ԻԱԿ իրավաբանի աջակցությամբ քաղաքացիների կողմից ուղարկվել է 39 հարցում: Բոլոր հարցումներին տրվել է պատասխան՝ օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում:

Լավ արդյունքներ գրանցել է Շիրակի մարզպետարպանը: 10.01.2006թ. ԻԱԿ Շիրակի մարզային իրավաբան Ա. Գրիգորյանը հարցում էր ուղարկել Շիրակի մարզպետ Ռոմիկ Մանուկյանին: Մեկ օր անց Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Նորիկ Գրիգորյանի կողմից ստացվել է ամբողջական եւ սպառիչ պատասխան:

Գեղարքունիքի մարզում աչքի են ընկել նախկին մարզպետ Ս. Բարսեղյանը եւ Գավառի տարածքային հարկային տեսչության պետ Ս. Խոստեղյանը, ովքեր հարցումներին պատասխանել են 3 օրվա ընթացքում:

Նախարարներից գովեստի է արժանի ՀՀ Գյուղատնտեսության նախարար պարոն Դավիթ Լոքյանը, ում ԵՊՀ ուսանողուհի Անուշ Շահումյանը 23.11.2005թ. հարցում էր ուղարկել եւ խնդրել տեղեկատվություն տրամադրել 2006թ.-ին նախատեսվող գյուղատնտեսության զարգացման նոր ծրագրերի մասին, թե Հայաստանում հացահատիկային ի՞նչ կուլտուրաներ են աճեցվում, եւ նախատեսվում է արդյո՞ք նոր տեսակներ ներմուծել Հայաստան 2006թ.-ին: 01.12.2005թ. ստացվեց 8 էջանոց սպառիչ պատասխան-գրությունը ՀՀ Գյուղատնտեսության նախարարից:

Ոչ բոլոր նախարարություններն են լավ աշխատում: Երկար քաշքշուկներից հետո ՀՀ Տրանսպորտի եւ Կապի փոխնախարարն պարզապես մերժեց տրամադրել տեղեկությունները՝ պատճառաբանելով, որ տեղեկատվության կամ դրա կրկնօրինակի տրամադրման կարգը սահմանված չէ կառավարության կողմից: Տեղեկություն ստանալու իրավունքը սահմանված է Սահմանադրությամբ, որի նորմերը գործում են անմիջականորեն: Այսինքն, նույնիսկ եթե «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը գոյություն չունենար, տեղեկությունը պետք է տրամադրվեր:

Դատական իշխանությունը նույնպես չի ուզում անմասն մնալ տեղեկատվության ազատության ոլորտում օրինակելի լինելուց: ԻԱԿ իրավաբան Ձ. Ենոքյանը 20.01.2006թ. հարցում էր ուղարկել ՀՀ Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ պարոն Լ. Պողոսյանին եւ խնդրել տրամադրել Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից 2005թ. ընթացքում ցմահ դատապարտված անձանց անուն, ազգանուն, հայրանունը, ծննդյան թվականը, հասցեն, քրեական օրենսգրքի կիրառված հոդվածները, դատավճռի հրապարակման օրը: 26.01.2006թ. թվագրված գրությամբ պարոն Պողոսյանը տրամադրեց սպառիչ տեղեկատվություն:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հարցումներ էր ուղարկել ՀՀ բոլոր մարզերի եւ Երեւանի բոլոր առաջին ատյանի դատարաններին՝ վիրավորանքի, զրպարտության, կաշառակերության եւ ՁԼՄ-ների հետ կապված գործերով կայացված դատական ակտերի պատճենները ստանալու նպատակով: Հարցումներին պատասխանել են ինը մարզի առաջին ատյանի դատարաններ: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահն էլ որոշել էր պատասխանն անձամբ բերել, սակայն Կենտրոնի տեղը չէր գտել եւ վերադարձել էր Տավուշ: Նա խոստացավ, որ պատասխան-գրությունը փոստով կուղարկի: Չնայած մայրաքաղաքի առաջին ատյանի դատարաններն ավելի մոտիկ են, սակայն մարզային դատարաններից անհամեմատ ավելի վատ են աշխատում: Հարցումներին պատասխանել են Երեւանի 7 դատարաններից 3-ը՝ Շենգավիթ համայնքի, Աջափնյակ եւ Դավթաշեն համայնքների, Ավան եւ Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանները: Օրենքը խախտած մյուս դատարանները՝ Կենտրոն եւ Նորք-Մարաշ, Էրեբունի եւ Նուբարաշեն, Մալաթիա Սեբաստիա, Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների, ներառվել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի Սեւ ցուցակում:

Գրեթե բոլոր մարզերում Անշարժ գույքի կադաստրի ստորաբաժանումները սկզբնական շրջանում թույլ են տվել տեղեկատվության ազատության իրավունքի բազմաթիվ խախտումներ. տեղեկատվություն ստանալու թե բանավոր, թե գրավոր հարցումներին չեն տրվել պատասխաններ անգամ օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարելուց հետո, անհիմն ձգձգվել են պատասխանների ժամկետները, կամ էլ հաճախ պատասխանել են ոչ ըստ էության: Որպես օրինակ կարող ենք նշել Լոռու մարզի Վանաձոր քաղաքի բնակիչ Արմենուհի Մադոյանի կողմից ՀՀ Կ/Ա անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վանաձորի ստորաբաժանման ղեկավար Գ. Անդրեասյանին հասցեագրված հարցումը, որով քաղաքացին խնդրել է իրեն տեղեկություններ տրամադրել այն մասին, թե ով է Սուխումի 1-77 հասցեի 4 սենյականով բնակարանի սեփականատերը, ինչպես նաեւ տրամադրել սեփականության իրավունքի վկայականի պատճենը: Գ. Անդրեասյանը ոչ միայն չի տրամադրել սեփականության իրավունքի վկայականի պատճենը, այն նաեւ չի հայտնել սեփականատիրոջ վերաբերյալ տեղեկատվությունը եւ մերժման հիմքում դրել է մեկ հարցմամբ երկու պահանջ ներկայացնելու անհնարինության պատճառաբանությունը:

Քաղաքապետարաններից ու գյուղապետարաններից հետո թվով ամենաշատ հարցումներ ուղարկվել են Անշարժ գույքի պետական կադաստրի տարբեր մարզային ստորաբաժանումներ: Եթե համեմատենք Անշարժ գույքի պետական կադաստրի ստորաբաժանումների 2005թ. հունիս-հոկտեմբեր ամիսների աշխատանքը նոյեմբեր-փետրվար ամիսների աշխատանքի հետ, ապա կարելի է ենթադրել, որ «թրթուռը ձգտում է դառնալ թիթեռ»: Այս ժամանակահատվածում Անշարժ գույքի կադաստր ուղարկվել է 24 հարցում, որոնցից 12-ին պատասխանել են 5-օրյա ժամկետում եւ ամբողջական: Եւս 12 հարցման պատասխանել են 30-օրյա ժամկետում: Անշարժ գույքի պետական կադաստրի Վանաձորի ստորաբաժանումը մեկ հարցում մերժել էր՝ պահանջելով վճարել ծառայությունների դիմաց, երկու հարցման էլ պատասխանել էր բանավոր:

Կարելի է արձանագրել, որ մարզերի բնակչությունը խուսափում է դատական կարգով իր իրավունքները, այդ թվում նաեւ տեղեկատվության ազատության իրավունքը պաշտպանելուց՝ նախընտրելով օգտվել բարեկամ-ծանոթ-ընկեր բանաձեւից: Նման ավարտ ունեցավ Լոռու մարզի Գավառ գյուղի բնակչուհի Լաուրա Մարտիրոսյանի կողմից «Տաշիր արծանապատ ամանեղենի գործարան» ԲԲԸ-ի դեմ ներկայացրած հայցի հիման վրա սկսված դատական գործը: Այն ավարտվեց գրեթե չսկսված, քանի որ Լաուրա Մարտիրոսյանը հրաժարվեց մեր մարզային իրավաբանի աջակցությունից՝ խուսափելով դատական քաշքշուկներից:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մարզային իրավաբանների կողմից քաղաքացիների դիմումների հիման վրա նոյեմբեր-մարտ ամիսներին 8 հայց է ներկայացվել առաջին ատյանի դատարաններ Գյումրիի, Արարատի մարզպետարանի, Ապարանի, Արմավիրի, Աբովյանի քաղաքապետարանների, Լուկաշինի (Արմավիրի մարզ) եւ Նուռնուսի (Կոտայքի մարզ) գյուղապետարանների, «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն» պոլիկլինիկա» ՓԲԸ-ի եւ ՀՀ Առողջապահության նախարարության դեմ: Արարատի եւ Ապարանի դեպքում դատական գործերը կարճվեցին, քանի որ պատասխանող կողմերը տրամադրեցին պահանջվող ամբողջ տեղեկատվությունը: Գյումրիի գործը թողնվեց առանց քննության՝ նույնպես տեղեկատվությունը տրամադրելու հիմքով: Արմավիրի քաղաքապետարանի, Լուկաշինի եւ Նուռնուսի գյուղապետարանների դեպքում դատարանը վճիռ կայացրեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնի օգտին: Աբովյանի քաղաքապետարանի դեմ գործի քննությունը դեռ ընթացքի մեջ է:

Ավելացնենք նաեւ, որ քաղաքացիներին եւ պաշտոնյաներին տեղեկատվության ազատության ոլորտում գործող օրենքներին եւ իրենց իրավունքներին ծանոթացնելու նպատակով Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է «Ինչպես օգտագործել տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքը» թեմայով ուսուցումներ ՀՀ բոլոր մարզերում: